ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 24.07.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/19

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի 03.07.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) 03.07.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից ՀՀ Կոտայքի մարզի ք. Աբովյանի հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարանի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 2017թ. մարտի 27-ի թիվ 1 որոշմամբ կազմակերպվել է «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/6» ծածկագրով գնման բաց ընթացակարգ:

«ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/6» ծածկագրով գնման բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Գնահատող հանձնաժողով) 26.05.2017թ. ժամը 16:30-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 1.2-րդ կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊԸ, «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ կոնսորցիումի հայտը գնահատվել է բավարար:

Գնահատող հանձնաժողովի 06.06.2017թ. ժամը 16:30-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 2.1-ին կետի համաձայն՝ «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊԸ, «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ (կոնսորցիում) ճանաչվել են առաջին տեղ զբաղեցրած մասնակից, իսկ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ն՝ երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից:

Նույն արձանագրության 3.1-րդ կետի համաձայն՝ որոշվել է ծանուցել «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊԸ-ին, «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ-ին (կոնսորցիում)՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

23.06.2017թ. www.gnumner.am կայքում հրապարակվել է գնահատող հանձնաժողովի հայտարարարությունը ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից կազմակերպված «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/6» ծածկագրով գնման բաց ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին: Ըստ վերոհիշյալ հայտարարության՝ հայտարարության տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 21-ի թիվ 4.1 որոշմամբ և վերոհիշյալ որոշման համաձայն՝ ընտրված մասնակից է ճանաչված «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊԸ, «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ (կոնսորցիում)-ը:»:

Որպես բողոքի իրավական հիմք Ընկերությունը մեջբերել է հետևյալ իրավանորմերը.

««Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերն զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում հանձնաժողովը գնահատում է նույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով, գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 34-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը կարող է գնման ընթացակարգին մասնակցել

համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիրը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի հրավերի 7.5.2-րդ կետի համաձայն՝ մասնակիցները կարող են նույն ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

Հրավերի 2.2.9-րդ կետի համաձայն՝ մասնակիցը ներկայացնում է համատեղ գործունեության պայմանագիրը, եթե մասնակիցը գնման ընթացակարգին մասնակցում է համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով)»:

Ընկերությունը նշել է, որ ընթացակարգին «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊԸ-ն և «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ-ն մասնակցել են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) և հայտով ներկայացրել են «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊԸ-ի և «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ-ի միջև կնքված համատեղ գործունեության պայմանագիրը: Հիշյալ պայմանագրի 5.1-րդ կետի համաձայն՝ համատեղ գործունեության պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

«Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ն հայտնել է, որ նշված պայմանագրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պայմանագիրը «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Հովսեփյանի կողմից էլեկտրոնային եղանակով ստորագրվել է 2017.05.06. ժամը 09:26:50-ին, իսկ «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊԸ-ի տօրեն Գ. Ալոյանի կողմից՝ 2017.05.06. ժամը 13:45:46-ին: Ըստ Ընկերության, վերոհիշյալը վկայում է, որ «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊԸ-ի և «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ-ի միջև կնքված համատեղ գործունեության պայմանագիրն ուժի մեջ է մտել պայմանագիրը երկկողմանի ստորագրելուց հետո, այն է՝ 2017.05.06. ժամը 13:45:46-ից հետո: Ընկերությունը հավելել է նաև, որ.

«Մինչդեռ «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊԸ, «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ (կոնսորցիում) կողմից ներկայացրած գնի առաջարկը մասնակիցների կողմից էլեկտրոնային ստորագրությամբ ստորագրվել է համապատասխանաբար «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Հովսեփյանի

կողմից՝ 2017.05.06. ժամը 09:20:41-ին, իսկ «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊԸ-ի տօրեն Գ.Ալոյանի կողմից՝ 2017.05.06. ժամը 13:43:46-ին:

Այսպիսով, «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊԸ, «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ տնօրենները, որպես կոնսորցիումի մասնակիցներ, համատեղ հաստատել, ստորագրել են ընթացակարգով ներկայացրած գնային առաջարկը այն պահին, երբ համատեղ գործունեության պայմանագիրը երկու մասնակցի կողմից դեռևս ստորագրված չի եղել, ուստի ուժի մեջ չի մտել: Այլ կերպ ասած, գնային առաջարկն ստորագրվել է այդ պահին դեռևս գոյություն չունեցող կոնսորցիումի կողմից, այսինքն ոչ պատշաճ մասնակցի կողմից (գնային առաջարկը ստորագրելու «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊԸ-ն, «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ-ն դեռևս իրավունք չունեին հանդես գալու որպես կոնսորցիումի մասնակիցներ), ուստի Գնահատող հանձնաժողովը հենց այս հիմքով, ղեկավարվելով Օրենքի 31-րդ հոդվածի և Կարգի 45-րդ կետի պահանջներով, և նկատի ունենալով, որ խնդիրը վերաբերում է շտկման ոչ ենթակա գնային առաջարկին, պետք է մերժեր «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊԸ-ի, «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ-ի կողմից կոնսորցիումով ներկայացրած հայտը:»:

«Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ն գտնում է, որ գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են Օրենքի և Կարգի վկայակոչված դրույթների պահանջները, ինչպես նաև Հրավերի նշված կետերը:

Միաժամանակ, Ընկերությունը նշել է, որ գնահատող հանձնաժողովը՝ նշված ընթացակարգի ընթացքում հանդիպելով նմանատիպ խնդրի, ուղղել է իր նախկինում թույլ տված սխալը, և հաղթող մասնակից ճանաչված «Վանի» ՍՊԸ-ի հայտը վերագնահատելով՝ այն մերժել է: Մասնավորապես, գնահատող հանձնաժողովի 06.06.2017թ. ժամը 16:30-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1.1-րդ կետով արձանագրվել է հետևյալը. «Վանի» ՍՊԸ-ի տնօրենը 08.05.2017թ. թիվ 25 լիազորագրով ընկերության գլխավոր հաշվապահին տվել է իր փոխարեն էլեկտրոնային ստորագրությամբ ընթացակարգին մասնակցելու համար հայտում ներառված փաստաթղթերը վավերացնելու լիազորություն, մինչդեռ գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված հայտի էլեկտրոնային տարբերակի մանրամասն ուսումնասիրության ժամանակ պարզվել է, որ «Վանի» ՍՊԸ-ի հայտը ներկայացվել է և մուտքագրվել համակարգ 07.05.2017թ: Ակնհայտ է, որ գլխավոր հաշվապահն իր էլեկտրոնային ստորագրությամբ վավերացրել է վերոհիշյալ փաստաթղթերն այն ժամանակ, երբ համապատասխան իրավունքը՝ լիազորությունը, չի ունեցել:»:

Ընկերությունը, Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է՝

1. Կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից ՀՀ Կոտայքի մարզի ք.Աբովյանի հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարանի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/6» ծածկագրով գնման բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ցանկացած գործողության իրականացումը, որոշումների կայացումը, այդ թվում նաև պայմանագիր կնքելու որոշման իրականացումը:

2. Դադարեցնել գնահատող հանձնաժողովի 26.05.2017թ. ժամը 16:30-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 1.2-րդ կետի 13-րդ ենթակետով «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊԸ, «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ (կոնսորցիում) հայտը բավարար գնահատելու մասին որոշումը և որպես հետևանք, դադարեցնել նաև «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊԸ, «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը:

3. Պայմանագիր կնքված լինելու դեպքում՝ «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/6» ծածկագրով գնման բաց ընթացակարգը հայտարարել ապօրինի:

Խորհրդի նիստերին մասնակցում էր «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Գուրգեն Հախնազարյանը:

2. **<u>ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն 07.07.2017թ. թիվ 02/27.1/4020-17 գրությամբ Խորհրդին է ներկայացրել «ՀՀՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/6» ծածկագրով բաց ընթացակարգին (այսուհետ նաև՝ ընթացակարգ) «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊԸ, «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ կոնսորցիումով ներկայացված հայտում ներառված փաստաթղթերի պատճենները, ինչպես նաև դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

««ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊԸ-ի և «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ-ի կողմից համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիրն էլեկտրոնային եղանակով ստորագրվել է 2017թ. մայիսի 6-ին ժամը 13:45:46, իսկ գնային առաջարկը՝ 2017թ. մայիսի 6-ին ժամը 13:43:46, կամ գնային առաջարկն էլեկտրոնային եղանակով ստորագրվել է 1 րոպե 59 վրկ. շուտ, քան համատեղ գործունեության պայամանգիրը:

Գնահատող հանձնաժողովի կողմից ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը կայացնելու համար հիմք է ընդունվել ««ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊԸ և «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից էլեկտրոնային www.armeps.am կայք երկու Ընկերությունների համատեղ հայտը մուտքագրելու ժամկետը, այն է՝ 2017թ. մայիսի 6-ը ժամը 14:09:24:

Միաժամանակ, հարկ է արձանագրել, որ էլեկտրոնային գնումների armeps հմակարգում նյութեր տեղադրելու, դրանք ստորագրելու ժամանակ հաճախ աառաջանում են բազմաթիվ տեխնիկական խնդիրներ, կապված էլեկտրոնային կայքի անխափան աշխատանքի, ինտերնետի որակի և արագության հետ:

Հաշվի առնելով վերոգրյալը և արձանագրելով, որ ներկայացված բողոքի առարկան տեխնիկական է, գտնում ենք, որ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի բողոքը ենթակա է մերժման»:

Խորհրդի նիստերին մասնակցում էին Պատվիրատուի ներկայացուցիչներ՝ Արայիկ Մնացականյանը և Հրաչիկ Ավետիսյանը:

<u>3. ԳԲԽ-ԷՍ-2017/19 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուդն ուսումնասիրել է «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի 03.07.2017թ. ներկայացրած բողոքը, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 07.07.2017թ. թիվ 02/27.1/4020-17 գրությունը, «ՀՀՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/6» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/6» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով), 06.06.2017թ. նիստի թիվ 5 արձանագրությունը, Պատվիրատուի և «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի ներկայացրած դիրքորոշումները և կարծիքները.

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն ՀՀ Կոտայքի մարզի ք. Աբովյանի հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարանի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 2017թ. մարտի 27-ի թիվ 1 որոշմամբ հայտարարել է «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/6» ծածկագրով բաց ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 06.06.2017թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊԸ և «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ

կոնսորցիումը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից և վերջինս ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

Նույն արձանագրությամբ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ն ճանաչվել է Ընթացակարգի երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից:

«Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ն Խորհրդին ներկայացված բողոքով հայտնել է, որ «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊԸ-ի և «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ-ի տնօրենները, որպես կոնսորցիումի մասնակիցներ, համատեղ հաստատել, ստորագրել են ընթացակարգով ներկայացրած գնային առաջարկն այն պահին, երբ համատեղ գործունեության պայմանագիրը երկու մասնակցի կողմից դեռևս ստորագրված չի եղել: Այսինքն գնային առաջարկն ստորագրվել է տվյալ պահին դեռևս գոյություն չունեցող կոնսորցիումի կողմից:

«ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊԸ և «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած գնի առաջարկը մասնակիցների կողմից էլեկտրոնային ստորագրությամբ ստորագրվել է համապատասխանաբար՝ «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Հովսեփյանի կողմից՝ 2017.05.06. ժամը 09:20:41-ին, իսկ «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊԸ-ի տօրեն Գ. Ալոյանի կողմից՝ 2017.05.06. ժամը 13:43:46-ին:

«ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊԸ և «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած 06.05.2017թ. համատեղ գործունեության պայմանագիրը «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Հովսեփյանի կողմից էլեկտրոնային եղանակով ստորագրվել է 2017.05.06. ժամը 09:23:50-ին, իսկ «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊԸ-ի տօրեն Գ. Ալոյանի կողմից՝ 2017.05.06. ժամը 13:45:46-ին:

Բողոքի քննության նպատակով 07.07.2017թ. տեղի ունեցած նիստի ժամանակ, Պատվիրատուի ներկայացուցիչները ընդունեցին այն փաստը, որ «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊԸ-ի և «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ-ի գնային առաջարկն էլեկտրոնային եղանակով ստորագրվել է 1 րոպե 59 վրկ. շուտ, քան համատեղ գործունեության պայամանգիրը, թեև նշեց, որ գնահատող հանձնաժողովի կողմից ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը կայացնելիս Հանձնաժողովը հիմք է ընդունել www.armeps.am համակարգ Ընկերությունների համատեղ հայտը մուտքագրելու ժամկետը, այն է՝ 2017թ. մայիսի 6-ը ժամը 14:09:24-ն:

«ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊԸ-ի և «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ-ի միջև 06.05.2017թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրի (այսուհետ՝ նաև Պայմանագիր) 5.1-րդ կետի համաձայն՝ համատեղ գործունեության պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Խորհուրդն արձանագրում է, որ «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊԸ և «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով armeps էլեկտրոնային գնումների համակարգ մուտքագրված գնային առաջարկն ստորագրվել է վերջիններիս կողմից մինչև համատեղ գործունեության պայմանագիրն ուժի մեջ մտնելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք)՝

• 436-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագիր է համարվում երկու կամ մի քանի անձանց համաձայնությունը, որն ուղղված է քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դադարելուն;

• 441-րդ հոդվածի համաձայն՝ պայմանագիրն ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում կնքելու պահից,

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 31-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 34-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը կարող է գնման ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիրը:

Հրավերի 7.5.2-րդ կետի համաձայն՝ մասնակիցները կարող են նույն ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

Հրավերի 2-րդ մասի «Բաց ընթացակարգի հայտը պատրաստելու» Հրահանգի 2.2.9-րդ կետի համաձայն՝ մասնակիցը ներկայացնում է համատեղ գործունեության պայմանագիրը, եթե մասնակիցը գնման ընթացակարգին մասնակցում է համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ բավարար գնահատելով «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊԸ և «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ կոնսորցիումի հայտը, խախտել է «Գնումների

մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ մասի 1-ին կետով և Հրավերի 2.2.9-րդ կետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի 03.07.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:

2. Դադարեցնել՝ Հանձնաժողովի 26.05.2017թ. նիստի արձանագրությամբ «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊԸ և «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ կոնսորցիումի հայտը բավարար գնահատելու մասին որոշումը, ինչպես նաև 21.06.2017թ. «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊԸ և «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ կոնսորցիումի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**